

Ն Ա Մ Ա Կ

Մեծապատիւ, Հրատարակող Նիածանի,

Առաջին անգամը, երբոր մեր յայտնեցինք տը-
պագրութեամբ մեր կարծիքը Պ. Նազարեանցի
գրութեան թարգմանութեան եւ գիտնական
արժանաւորութեան աստիճանի մասին, նոյն ժա-
մանակումը ասացինք, թէ նորա աշխատակիցնե-
րի հետ գործ չունենք: Պ. Նազարեանցը, չնայե-
լով այն մեր յայտարարութեանը, գրում է միշտ
իւր իբր պատասխանները իւր ընկերների անուն-
ներով, որոց մէջ շատը մտացածին են: Մեք մեր
առաջին զեկուցմանը եւ նպատակին համաձայն,
դարձուցանում ենք ու պէտք է միշտ դարձուցա-
նենք մեր խօսքը ուղղակի Պ. Նազարեանցին,
նորա համախոյ ընկերների վերայ, յարմարաւոր
տեղումը եւ միայն հարկը պահանջելու ժամանա-
կը, կբաւականանանք երբեմն քար ձգելով, որ
չիցէ թէ մեր խօսելու ժամանակը, փողոցաշրջիկ
գազանների նման, ընկնեն մեր վերայ ու պա-
տառեն մեր հանդերձը. որովհետեւ այդ միայն
կարող են առնել նոքա: Թերուսումն, գերմա-
նահայ վարդապետը, եւ նորա առանց ուսման
ուսեալ ընկերները, որոց հասարակութիւնը զար-
դարում է մանաւանդ նոցա մէջ ընտիրը եւ գիտ-
նականութեամբ երեւելին Սադան, իւրեանց սո-
վորական կողմնակի պատասխաններով չեն հե-
ռացնելու մեզ մեր հաստատուն նպատակից, որ
է զգուշացուցանել մեր սիրելի ու պատուական
ազգը Նազարեանցի լեզուակործան գրութեան-
րից ու դաւաճանողական կրօնընդդէմ մտքերից,
որը որ թո՛ղ նոր կուսակիցները, գիտութեամբ
կամ անգիտութեամբ, չկարողանալով կամ չկա-
մելով վերահասու լինել ճշմարտութեան, կոչեն
մեծ ու ազգաշէն զաղախարհներ:

Նազարեանցի գրութեանը ու մեր Հայոց բազ-
մաթիւ ուսումնականների այլ եւ այլ ժամանակ
տպագրութեամբ քննութիւնները ընթերցողների ա-
ռաջումն են. նոքա տեսանում են, թէ ի՞նչ պա-
տասխան է տուել մինչեւ այսօր *Երոսկեական լու-
սի տակ հասած* մեծախօս վարդապետը, օրինակի
համար ասենք, արժանապատիւ Առաքել Արա-
րատեանին, որ մեծ աշխատութեամբ, ազգի
զգուշութեան համար, հաւաքել է Նազարեանցի

հարիւրաւոր սխալանքը ազգային լեզուի եւ կրօնի
ընդդէմ, եւ մի ըստ միոյ՛է սրբագրելով ու հեր-
քելով, տպագրել է բոլոր երկու առանձին գրքե-
րում, որ կոչուում են *Դիմացրաւ ընդդէմ սատան յա-
րուցեցոց ամենապատուական լեզուիս Հայոց եւ Սր-
խարանք վարդապետարանին կրօնի Ստեփանոսի Նա-
զարանց, Տփլիս, 1858: Ի՞նչ է պատասխանել*
Նազարեանցը այդ եւ այլ քննութիւններին, ոչինչ.
Նա՛ եւ նորա ընկերները անգիր սերտած ունեն
մի միայն պատասխան՝ ամենին ասելու համար
առանց որ եւ իցէ տարբերութեան, թէ այս կամ
այն նոցա հակառակ գրողը հին լուսաւորութեան
մարդ է, Նազարա-Նալբանդա-Սադայական նո-
րասքանչ լուսաւորութիւնը չհասկացող. ո՛վ եւ
ո՛րքան կամենայ ցոյց տայ նոցա սխալները, նո-
ցա մոլորութիւնը, նոցա ծիծաղաշարժ դատո-
ղութիւնները, թիւր եւ արտուղի ճանապարհը
եւ համանգամայն նոցա տաղտկալի անձնագովու-
թիւնը, նոցա պատասխանը պատրաստ է, նոքա
կասեն. «Այն մարդը կոյր է, լուսաւորութեանը
թշնամի եւ հակառակորդ, հնամուլ, մարդկութեան
յառաջընթացութիւնը արգելող, կարճատես եւ
այլն». այլ պատասխան չկայ. վասն որոյ մեզ մնու-
մէ կրկնելով յայտնի առածը թէ

Յիմար է այն քննարահար

Որ հարկանէ միշտ ըզնոյն լար,

յառաջ տանել մեր խօսքը. կողմնակի ու հարե-
ւանցի զրոյցներ թո՛ղ չգրաւեն մեր ուշադրու-
թիւնը. ամենայն հնարք պէտք է գործ դնենք,
որ ազգային դաւաճանութիւնը չհամարուի ազգին
բարերարութիւն. Նազարա-Նալբանդա-Սադայա-
կան խաւարը չպատէ բոլորովին մեր պատուա-
կան ազգը լուսաւորութեան սուտ անունով. վա-
սակները չյափշտակեն վարդանների տեղը: Այս
անգամ խնդրում եմ Ձեր ազգաշահ ամսագրի միջ-
նորդութիւնը, Մեծապատիւ հրատարակող Նիա-
ծանի, որ կարողանամ մին քանի խօսք ասել
Նազարեանցին ուղղակի՝ յետագայ նամակովս:

Ամենախոնարհ ծառայ

ՅՈՎԻԿ ԶԵՐԲԵԶԱՆՅ: